ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն Գաղտնիության քաղաքականությունը նկարագրում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող ծառայություններից օգտվելիս հաճախորդի տեղեկատվության հավաքագրման, օգտագործման և բացահայտման գծով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ որդեգրած քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ սահմանելով տեղեկատվության գաղտնիության հաճախորդի իրավունքները և այդ իրավունքների պաշտպանության իրավական կարգավորումները:

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հասկացություններ

ՄԵծատառերով օգտագործվող բառերն ունեն իմաստներ, որոնք սահմանվում են հետևյալ պայմանով. Ներքոնշյալ սահմանումները պետք է ունենան միևնույն նշանակությունը՝ անկախ նրանից օգտագործվում են եզակի, թե՝ հոգնակի թվով:

Սահմանումներ

Սույն Գաղտնիության քաղաքականության շրջանակներում՝

- **Հաճախորդ՝** (սույն Քաղաքականությունում նշված որպես «Դուք», «Ձեր» կամ «Ձեզ» կամ վերջիններիս այլ հոլովումներ)՝ ֆիզիկական անձ, ով օգտվում է Բանկի կողմից առաջարկվող որևէ Ծառայություններից կամ դիմել է Բանկին կամ որևէ կերպ մտադրություն է հայտնել Բանկի Ծառայություններից օգտվելու համար, ներառյալ նաև ընկերությունը կամ այլ իրավաբանական անձ, որի անունից այդ ֆիզիկական անձը գործում է՝ Ծառայություններից օգտվելու համար:
- **Բանկ՝** (սույն Քաղաքականությունում նշված որպես «Մենք», «Մեզ» կամ «Մեր» կամ վերջիններիս այլ հոլովումներ)՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (Վազգեն Սարգսյան 26/1, 0010 Երևան, ՀՀ), այդ թվում՝ վերջինիս մասնաճյուղերը:
- **Կայք՝** Բանկի պաշտոնական կայքը՝ www.conversebank.am
- **Համակարգ՝** Ինտերնետային, մոբայլ, էլեկտրոնային-փոստային և այլ միջավայրերում Բանկի կողմից առաջարկվող այլ գործիքներ և համակարգեր, այդ թվում՝ Բանկի կողմից առաջարկվող բջջային հավելվածները, որոնք հնարավորություն են տալիս էլեկտրոնային կապի, հեռախոսակապի միջոցով կամ այլ կերպ օգտվել բանկային ծառայություններից՝ առանց Բանկ այցելելու: Համակարգերի տեսակները, դրանց օգտագործման պայմանները և կանոնները հրապարակվում են Կայքում կամ համապատասխան Համակարգից օգտվելու համար սահմանված այլ կայքերում, ծրագրային ապահովման միջոցներում և բջջային հավելվածներում և կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:
- **Հավելված՝** Բանկի կողմից տրամադրվող առանց Բանկ այցելելու հեռահար բանկային ծառայություններից համար նախատեսված ծրագրային ապահովվածություն, որը Դուք

ներբեռնում եք Ձեր ցանկացած էլեկտրոնային սարքի վրա և կարող եք օգտագործել սահմանված կարգով գրանցվելուց հետո,

- Օգտատեր՝ Համակարգից օգտվելու համար որոշակի ծրագրային տիրույթում անձնական էջ գրանցած Բանկի Հաճախորդ
- **Երկիրը**՝ Հայաստան,
- **Սարք՝** նշանակում է ցանկացած սարք, որի միջոցով Դուք կարող եք մուտք գործել հավելված, օրինակ՝ համակարգիչ, բջջային հեռախոս կամ թվային պլանշետ,
- **Անձնական տվյալները՝** ցանկացած տեղեկություն, որը վերաբերում է նույնականացված կամ նույնականացվող անձին,
- **Ծառայություններ՝** Բանկի կողմից առաջարկվող և Կայքում հրապարակված պայմաններով ցանկացած ծառայություն, այդ թվում՝ Համակարգի միջոցով,
- **Օգտագործման ենթակա տվյալներ՝** վերաբերում են Բանկի կողմիցհավաքագրված տվյալներին, որոնք ի հայտ են եկել Ծառայությունից օգտվելու ընթացքում կամ առաջացել/գեներացվել են հենց Ծառայության ենթակառուցվածքից, Համակարգերից կամ Հավելվածներից (օրինակ՝ Համակարգ այցելության տևողությունը):
- **Փոխկապակցված կազմակերպություն՝** կազմակերպություն, որը վերահսկում, վերահսկվում կամ գտնվում է ընդհանուր հսկողության ներքո որևէ անձի կողմից, որտեղ «հսկողություն» նշանակում է տնօրենների կամ այլ ղեկավարների ընտրության համար քվեարկելու իրավունք ունեցող բաժնետոմսերի, կապիտալի կամ այլ արժեթղթերի 50% և ավելի սեփականություն,

ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Հավաքագրված տվյալների տեսակները

Անձնական տվյալներ

Մեր Ծառայություններից օգտվելու համար մենք կարող ենք պահանջել տրամադրել որոշակի անձնական տվյալներ, որոնք կարող են օգտագործվել Ձեզ հետ կապ հաստատելու կամ նույնականացնելու համար: Անձնական տվյալները կարող են ներառել, բայց չսահմանափակվել հետևյալ տվյալներով՝

- Էլեկտրոնային հասցե

- Անուն և ազգանուն
- Հեռախոսահամար
- Հասցե, երկիր, նահանգ, ZIP/փոստային ինդեքս, քաղաք
- Համակարգերի Օգտագործման տվյալներ,

Ինչպե՞ս ենք հավաքագրում տվյալները

Մենք Ձեզանից տեղեկություններ ենք հավաքագրում հետևյալ միջոցներով.

- Երբ Դուք լրացնում եք Ծառայություններից օգտվելու հայտեր (այսուհետ՝ «Հայտեր») Բանկի տարածքում կամ Համակագերով
- Երբ օգտվում եք մեր պաշտոնական Կայքից՝ հետևյալ դեպքերում՝
    - Բաժանորդագրվում եք նորություններին
    - Լրացնում եք «Հետադարձ կապ» ձևը
- Ներբեռնում եք Բանկի կողմից առաջարկվող Հավելվածները և գրանցվում դրանցում:

Նշված միջոցներով ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է անձնական տեղեկատվություն/ տվյալ:

Օգտագործման տվյալներ

Օգտագործման տվյալները հավաքագրվում են Համակարգերի միջոցով Ծառայություններից օգտվելիս: Օգտագործման տվյալները կարող են ներառել այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են Ձեր Սարքի ինտերնետային հասցեն (օրինակ՝ IP հասցեն), դիտարկիչի /browser, բրաուզեր/ տեսակը, դիտարկիչի տարբերակը, Ծառայության այն էջերը, որոնք Դուք այցելում եք, Ձեր այցելության ժամը և ամսաթիվը, այդ էջերում անցկացրած ժամանակը, տվյալ սարքի նույնացուցիչները /identifiers/, Համակարգերից օգտվելու համար մուտքանունը և այլ տարբերակիչ տվյալներ: Երբ Դուք մուտք եք գործում Հավելված շարժական սարքի միջոցով, մենք կարող ենք ավտոմատ կերպով հավաքագրել որոշակի տեղեկատվություն, ներառյալ, բայց չսահմանափակվելով, ձեր օգտագործած շարժական սարքի տեսակը, Ձեր բջջային սարքի ID-ն, Ձեր շարժական սարքի IP հասցեն, Ձեր բջջային հեռախոսի օպերացիոն համակարգը, Ձեր օգտագործած շարժական ինտերնետ բրաուզերի տեսակը, սարքի նույնացուցիչները և այլ տարբերակիչ տվյալներ: Մենք կարող ենք նաև հավաքագրել տեղեկատվություն, որն ուղարկում է Ձեր բրաուզերը, երբ Ձեր Սարքի միջոցով մուտք եք գործում Համակարգի միջավայր՝ մեր Ծառայությունից օգտվելու համար:

Ձեր անձնական տվյալների/Cookies օգտագործումը

Բանկը կարող է օգտագործել Ձեր Անձնական տվյալները հետևյալ նպատակների համար՝

• Մեր Ծառայությունները տրամադրելու նպատակով, ներառյալ մեր Ծառայությունների օգտագործումը վերահսկելու համար,
• Ձեր օգտահաշիվը կառավարելու համար՝ իրականացնելով Ձեր գրանցումը որպես Համակարգի օգտատեր: Ձեր տրամադրած անձնական տվյալները կարող են Ձեզ հնարավորություն տալ օգտվել Համակարգերի տարբեր գործառույթներից, որոնք հասանելի են Ձեզ՝ որպես գրանցված օգտատեր,
• Պայմանագրի կատարման համար. Ձեր կողմից բանկային պրոդուկտներից/ծառայություններից օգտվելու ընթացքում պայմանագր/եր/ի մշակում, համապատասխանության ապահովում և ստանձնում կամ մեզ հետ որևէ այլ պայմանագր/եր/ի/համաձայնագրերի/հուշագրերի կնքում և/կամ համագործակցության հաստատում,
• Ձեզ հետ կապ հաստատելու համար էլ. փոստով, հեռախոսազանգերով, կարճ հաղորդագրությամբ (SMS)-ով կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ համարժեք ձևերով, ինչպիսիք են օրինակ՝ Հավելվածների (push) ծանուցումները՝ գործառույթների, ապրանքների կամ պայմանագրային ծառայությունների թարմացումների հետ կապված տեղեկատվության փոխանցման համար, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, անվտանգության նկատառումներով իրականացվող թարմացումները,
• Մեր կողմից առաջարկվող պրոդուկտների, Ծառայությունների և իրադարձությունների մասին նորություններ, հատուկ առաջարկներ և ընդհանուր տեղեկություններ տրամադրելու համար, հատկապես այն ապրանքների, որոնք դուք արդեն գնել եք կամ որոնց շուրջ հարցումներ եք արել, եթե իհարկե Դուք չեք հրաժարվել նման տեղեկատվություն ստանալուց,
• Մեզ հասցեագրված Ձեր հարցումներին պատասխանելու և դրանք կառավարելու համար,
• Բիզնեսի փոխանցման համար. մենք կարող ենք օգտագործել Ձեր տվյալները, որպեսզի գնահատենք կամ իրականացնենք Մեր որոշ կամ բոլոր ակտիվների միաձուլումը, զիջումը, վերակազմավորումը, լուծարումը, վաճառքը կամ փոխանցումը՝ որպես գործունեության շարունակություն, կամ որպես

սնանկության, լուծարման մաս, կամ նմանատիպ ընթացակարգ, որի շրջանակներում փոխանցված ակտիվների թվին են պատկանում մեր Ծառայություններից օգտվողների մասին պահվող անձնական տվյալները,

• Այլ նպատակների համար. մենք կարող ենք օգտագործել Ձեր տեղեկատվությունը այլ նպատակների համար, ինչպիսիք են տվյալների վերլուծությունը, օգտագործման միտումների բացահայտումը, մեր գովազդային արշավների արդյունավետությունը որոշելու և մեր Ծառայությունները ինչպես նաև Ծառայություններից օգտվելու Ձեր փորձը գնահատելու և այն բարելավելու համար:

Մենք կարող ենք փոխանցել Ձեր անձնական տվյալները հետևյալ դեպքերում՝

• Մենք կարող ենք Ձեր անձնական տվյալները փոխանցել Մեզ ծառայություններ մատուցող անձանց՝ վերահսկելու և վերլուծելու մեր Ծառայության օգտագործումը, ինչպես նաև Ձեզ հետ կապ հաստատելու համար,

• Բիզնեսի փոխանցման դեպքում. մենք կարող ենք փոխանցել Ձեր անձնական տվյալները՝ մեկ այլ ընկերության կողմից մեր Ընկերության ակտիվների ցանկացած միաձուլման, վաճառքի, մեր բիզնեսի ամբողջ կամ մի մասի ֆինանսավորման կամ ձեռքբերման հետ կապված բանակցությունների ընթացքում,

• Անձնական տվյալները կարող են փոխանցվել Փոխկապակցված ընկերություններին. մենք կարող ենք փոխանցել Ձեր տեղեկությունները մեր մասնաճյուղերին/փոխկապակցված անձանց՝ պահանջելով պահպանել սույն Գաղտնիության քաղաքականությամբ սահմանված դրույթները: Փոխկապակցված կազմակերպություններն են մեր հիմնադիր ընկերությունը և ցանկացած այլ դուստր ձեռնարկություն, մասնաճյուղ, համատեղ ձեռնարկություն կամ այլ ընկերություններ, որոնք մենք վերահսկում ենք կամ մեզ հետ միասին գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ,

• Անձնական տվյալները կարող են փոխանցվել Մեր գործընկերներին՝ Ձեզ որոշակի ապրանքներ, ծառայություններ կամ գովազդային առաջարկներ ներկայացնելու համար, ինչպես նաև՝

• Այլ անձանց, երբ դուք կիսվում եք Ձեր անձնական տեղեկություններով կամ շփվում եք այլ օգտատերերի հետ հանրային տիրույթում, այդ տեղեկատվությունը կարող է դիտվել բոլոր օգտատերերի կողմից և կարող է ստանալ հանրային տարածում,

• Ձեր համաձայնությամբ մենք կարող ենք հանրայնացնել/փոխանցել Ձեր անձնական տվյալները ցանկացած այլ նպատակով:

«Cookies» սահմանումը և օգտագործումը

HTTP «Cookies» (նաև կոչվում են վեբ cookies (թխուկներ)) տվյալների փոքր բլոկներ են, որոնք ստեղծվում են վեբ սերվերի կողմից, երբ Դուք զննում եք կայքը և թույլ են տալիս Կայքին կամ Համակարգերին ճանաչել Ձեր բրաուզերը և հիշել որոշակի տեղեկատվություն, այդ թվում՝ այցելությունների քանակը: Այսպիսի տեղեկատվության միջոցով Մենք կարող ենք պարզել Ձեր նախընտրությունները՝ համաձայն Ձեր նախկին կամ ընթացիկ գործողությունների:

Ձեր անձնական տվյալների պահպանումը

Բանկը կպահպանի Ձեր Անձնական տվյալներն այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է սույն Գաղտնիության քաղաքականությամբ սահմանված նպատակների իրականացման համար: Մենք կպահպանենք և կօգտագործենք Ձեր Անձնական տվյալներն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ «Օրենք») նախատեսված և սահմանված դեպքերում՝ մեր պարտավորություններն իրականացնելու (օրինակ, եթե պահանջվում է պահպանել ձեր տվյալները՝ կիրառվող Օրենքին համապատասխան), վեճերը լուծելու և իրավական համաձայնագրերն ու քաղաքականությունը իրագործելու համար: Բանկը կարող է նաև պահպանել Օգտագործման տվյալները՝ ներքին վերլուծություն իրականացնելու նպատակով: Օգտագործման տվյալները սովորաբար պահպանվում են ավելի կարճ ժամանակով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք օգտագործվում են անվտանգության ամրապնդման նկատառումներով կամ մեր Ծառայության որակը բարելավելու համար, կամ եթե մենք պարտավորվել ենք պահպանել այդ տվյալները ավելի երկար ժամանակով:

Ձեր անձնական տվյալների փոխանցումը

Ձեր տեղեկությունները, ներառյալ Անձնական տվյալները, մշակվում են Բանկի գործառնական գրասենյակներում և ցանկացած այլ վայրերում, որտեղ գտնվում են Անձնական տվյալների մշակման մեջ ներգրավված կողմերը: Դա նշանակում է, որ այս տեղեկատվությունը կարող է փոխանցվել և պահպանվել համակարգիչների վրա, որոնք գտնվում են Ձեր երկրից, նահանգից, մարզից կամ այլ պետական իրավասության սահմաններից դուրս, որտեղ տվյալների պաշտպանության մասին օրենքները կարող են տարբերվել Ձեր երկրի օրենքներից: Տալով Ձեր համաձայնությունը սույն Գաղտնիության քաղաքականությանը, որին հաջորդում է Ձեր կողմից նման տեղեկատվության տրամադրումը, Դուք տալիս եք նաև Ձեր համաձայնությունը այդ փոխանցմանը: Բանկը պարտավորվում է իրականացնել անհրաժեշտ բոլոր քայլերը՝ ապահովելու ձեր տվյալների անվտանգությունը համապատասխան սույն Գաղտնիության քաղաքականությանը, և հավաստիացնում է, որ Ձեր Անձնական տվյալները չեն փոխանցվի այլ կազմակերպությանը կամ երկրին, առանց համապատասխան վերահսկողության, և անվտանգության ապահովման:

ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ/ՄԱՔՐՈՒՄԸ

Դուք իրավունք ունեք ջնջելու կամ դիմելու մեր աջակցությանը ջնջելու Ձեր մասին հավաքագրված Անձնական տվյալները: Մեր Համակարգերը/հավելվածները Ձեզ հնարավորություն կարող են տալ ջնջելու Ձեր մասին որոշակի տեղեկություններ: Դուք կարող եք ցանկացած պահի թարմացնել, փոփոխել կամ ջնջել Ձեր տվյալները՝ մուտք գործելով Ձեր հաշիվ /առկայության դեպքում/, և, անցնելով հաշվի կարգավորումների բաժին, կառավարել Ձեր Անձնական տվյալները: Դուք կարող եք նաև կապ հաստատել մեզ հետ՝ մուտք գործելու, մեզ տրամադրած Ձեր ցանկացած Անձնական տվյալ ուղղելու կամ ջնջելու դիմումով: Տեղեկացնում ենք, որ հնարավոր է մեզ անհրաժեշտ լինի պահպանել որոշակի տեղեկատվություն, եթե դա անելու համար մենք ունենք իրավական պարտավորություն կամ իրավական հիմք:

ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Բիզնես գործարքներ

Ձեր Անձնական տվյալներն ենթակա են փոխանցման, եթե Ձեր ընկերությունը ներգրավված է միաձուլման, ձեռքբերման կամ ակտիվների վաճառքի մեջ: Մենք կծանուցենք Ձեզ նախքան Ձեր Անձնական տվյալների փոխանցումը և, դրա զծով մեկ այլ Գաղտնիության քաղաքականության կիրառումը:

Օրենքով նախատեսված դեպքերում

Որոշակի հանգամանքներում Բանկից կարող է պահանջվել բացահայտել Ձեր Անձնական տվյալները, եթե դա պահանջվում է օրենքով կամ ի պատասխան պետական մարմինների (օրինակ՝ դատարանի կամ պետական գործակալության) իրավական /օրենքով սահմանված/ հարցմանը:

Այլ իրավական պահանջներ

Բանկը կարող է բացահայտել Ձեր Անձնական տվյալները՝ բարեխղճորեն հավատալով, որ նման գործողությունն անհրաժեշտ է՝

- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները կատարելու համար,
- Բանկի իրավունքները կամ սեփականությունը պաշտպանելու համար,
- Ծառայությունների, ներառյալ՝ Համակարգերի/Հավելվածների հետ կապված հնարավոր իրավախախտումները կանխելու կամ հետաքննելու համար,
- Ծառայություններից օգտվողների, Համակարգերի/Հավելվածների Օգտատերերի կամ հանրության անձնական անվտանգությունը ապահովելու համար,
- Իրավական պատասխանատվությունից պաշտպանելու համար:

ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մենք կարևորում ենք Ձեր Անձնական տվյալների անվտանգությունը, կիրառում ենք անվտանգության տարբեր միջոցներ սակայն պետք է հիշել, որ ինտերնետի միջոցով

տվյալների փոխանցման որևէ մեթոդ կամ էլեկտրոնային պահպանման եղանակ չի ապահովում 100% անվտանգություն: Չնայած այն հանգամանքին, որ Մենք ձգտում ենք կիրառել ընդունելի բոլոր միջոցները Ձեր անձնական տվյալները պաշտպանելու համար, Մենք չենք կարող երաշխավորել դրանց բացարձակ անվտանգությունը: Ձեր անձնական տվյալները մշտապես գտնվում են պաշտպանված ցանցերում, դրանք հասանելի են միայն սահմանափակ թվով մարդկանց, ովքեր ունեն հատուկ իրավունքներ նշված համակարգերի հասանելիության համար, ինչպես նաև պարտավոր են պահպանել նշված տվյալների, տեղեկությունների գաղտնիությունը օրենքով սահմանված կարգով:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Մեր Ծառայությունը հասցեագրված չէ 14 տարեկանից ցածր անձանց: Մենք 14 տարեկանից ցածր որևէ անձից անձնական տվյալներ չենք հավաքագրում: Եթե Դուք ծնող կամ խնամակալ եք, և տեղյակ եք, որ Ձեր երեխան մեզ տրամադրել է Անձնական տվյալներ, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ: Եթե մենք տեղեկանանք, որ մենք անձնական տվյալներ ենք հավաքագրել 14 տարեկանից ցածր որևէ մեկից՝ առանց ծնողների համաձայնության հաստատման, մենք քայլեր կձեռնարկենք այդ տեղեկատվությունը մեր համակարգերից հեռացնելու/ջնջելու համար: Եթե անհրաժեշտ է ունենալ համաձայնություն, որպես իրավական հիմք Ձեր տեղեկությունները մշակելու համար, և եթե օրենսդրությունը պահանջում է ծնողի համաձայնությունը, նախքան այդ տեղեկատվությունը հավաքագրելը և օգտագործելը, մենք կարող ենք պահանջել երեխայի ծնողի համաձայնությունը:

ԱՅԼ ԿԱՅՔԵՐԻ ՀՂՈՒՄՆԵՐ

Մեր Կայքը կամ հավելվածները կարող են պարունակել այլ կայքերի հղումներ, որոնք մեր կողմից չեն կառավարվում: Եթե Դուք անցնում եք երրորդ կողմի հղումով, ապա դուք տեղափոխվում եք այդ երրորդ կողմի կայք: Մենք խորհուրդ ենք տալիս ուշադիր ուսումնասիրել Ձեր այցելած յուրաքանչյուր կայքի Գաղտնիության քաղաքականությունը: Մենք չենք վերահսկում և պատասխանատվություն չենք կրում երրորդ կողմի կայքերի կամ

ծառայությունների բովանդակության, գաղտնիության քաղաքականության կամ գործելակերպի համար:

ՍՈՒՅՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Մենք կարող ենք ժամանակ առ ժամանակ թարմացնել Մեր Գաղտնիության քաղաքականությունը: Մենք Ձեզ կտեղեկացնենք ցանկացած փոփոխության մասին՝ այս էջում տեղադրելով Գաղտնիության վերանայված նոր քաղաքականությունը: Խորհուրդ է տրվում պարբերաբար վերանայել այս Գաղտնիության քաղաքականությունը՝ ցանկացած փոփոխության շուրջ իրազեկված լինելու նպատակով: Սույն Գաղտնիության քաղաքականության փոփոխություններն ուժի մեջ են մտնում կայքում հարապարակվելուց/տեղադրվելուց հետո:

Հետադարձ կապ

Սույն Գաղտնիության քաղաքականության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում կարող եք կապ հաստատել մեզ հետ՝

- Այցելելով մեր կայքի տվյալ էջը՝ https://conversebank.am/hy/contact-us/ և/կամ
- Զանգահարելով հետևյալ հեռախոսահամարով ՝ +374 10 511211